ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 159

23 հոկտեմբերի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՌԱԴՆԻԿ ԵՓՐԵՄԻ ՇԱՎՈՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի բնակիչ Ռադնիկ Եփրեմի Շավոյանի 23.10.2013 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թվականի հոկտեմբերի 16-ին, ըստ օրենքի, ժառանգության իրավունքի վկայագրի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի թիվ 36 հասցեում գտնվող բնակելի տունը և հողամասը ժառանգություն է ստացել իր հորից՝ Եփրեմ Մարկոսի Շավոյանից և նույն հասցեում Ռադնիկ Եփրեմի Շավոյանը 1997 թվականին կառուցել է պարիսպ և հարթակ , սակայն իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.07 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.01214 հա հողամաս, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37 հոդվածի դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տներին կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ***

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Ռադնիկ Եփրեմի Շավոյանի (ծնված 1935թ.) ք. Մարալիկ Հաղթանակի փողոց թիվ 36 հասցեում 1997 թվականին կառուցված հարթակի և պարսպի, ինչպես նաև օրինական հատկացված 0.07 հա հողամասի, <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տներին կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 0.01214 հա հողամասի գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում պետական գրանցում կատարելու նպատակով:

Քաղաքապետ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 __ □. _____ ____
□.□□□□□□□□